



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 2-րդ մասի 2-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի երկրորդ մասի և ութերորդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.1 կետի 1-ին և 3-րդ ենթակետերի, 7.4 կետի 2-րդ ենթակետի, 7.5, 7.7, 7.8, 12.1, 12.2, 13.2, 14.1, 14.2 կետերի, 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

**նկատի ունենալով** այն հանգամանքը, որ՝ 2017թ. հոկտեմբերի 4-ին լրանում է ՀՀ փաստաբանների պալատի գործող նախագահի լիազորությունների ժամկետը,

**հաշվի առնելով** ՀՀ փաստաբանների պալատի նոր նախագահ ընտրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/3-Լ որոշմամբ հաստատված ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 1.5 կետում նշված ՀՀ փաստաբանների պալատի գտնվելու վայրի հասցեն փոփոխելու անհրաժեշտությունը (կանոնադրության փոփոխության նախագիծը հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 03.08.2017թ. թիվ 16/2-Լ որոշմամբ),

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09<sup>00</sup>-ից ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1.1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն.

1.2. ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում:

2. Սահմանել, որ՝

2.1. Օրակարգային հարցերով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09<sup>00</sup>-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18<sup>00</sup>-ին.

07 օգոստոսի 2017թ.

թիվ 225-Լ

2.2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2017 թվականի օգոստոսի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի օգոստոսի 17-ին (ներառյալ)։

2.3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2017 թվականի օգոստոսի 18-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 18<sup>00</sup>-ին։

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի։

4. ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 03.08.2017թ. թիվ 16/2-L [որոշմամբ](#) հաստատված ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության [նախագիծը](#)։

5. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրենին՝

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2) հայտարարությունների ցուցատախտակին ծանուցումը հրապարակելու միջոցով։
- օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով։

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

07 օգոստոսի 2017թ.  
թիվ 225-L  
ք. Երևան